

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ

ԿԱՐԳ

Սույն կարգով սահմանվում են Հայաստանի ազգային ազրարային համալսարանի պատվավոր կոչումների շնորհման ընթացակարգը և չափանիշները:

Համալսարանի կանոնադրության 7-րդ կետի 9-րդ ենթակետի դրույթներին համապատասխան՝ սահմանվում են Հայաստանի ազգային ազրարային համալսարանի պատվավոր կոչումները՝

- համալսարանի պատվավոր դոկտորի,
- համալսարանի պատվավոր պրոֆեսորի,
- համալսարանի վաստակավոր պրոֆեսորի,
- համալսարանի վաստակավոր գիտաշխատողի:

Համալսարանի պատվավոր կոչումների շնորհման համար գիտական խորհրդի որոշմամբ ձևավորվում է փորձագետների խումբ, որը քննարկում է ֆակուլտետների գիտական խորհուրդների, գիտական լաբորատորիաների և կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից առաջադրված թեկնածուների հարցը՝ հաշվի առնելով թեկնածուի գիտամանկավաժական գործունեությունը, գիտական վաստակը և կենսագրական այլ տվյալներ:

Համալսարանի գիտական խորհուրդը քննարկում է ներկայացված թեկնածությունները և որոշում կայացնում կոչումների շնորհման վերաբերյալ:

Պատվավոր կոչումների շնորհման ընթացակարգ

Համալսարանի ընդլայնված գիտական խորհրդում պատվավոր կոչման հավակնորդի տվյալները ներկայացնում է տվյալ ոլորտի պրոռեկտորը կամ համապատասխան ֆակուլտետի դեկանը:

Ելույթ է ունենում պատվավոր կոչման հավակնորդը:

Հանդիսավոր պայմաններում նրան շնորհվում են համապատասխան դիպլոմ և հանդերձանք:

Համալսարանի պատվավոր դոկտորի կոչում

Պատվավոր դոկտորի կոչում շնորհվում է այն անձանց, ովքեր չեն աշխատում Հայաստանի ազգային ազրարային համալսարանում և՝

- ա) վերջին տարիներին համագործակցել են համալսարանի գիտական աշխատանքներին՝ բարձրացնելով համալսարանի գիտական հեղինակությունը, գիտության, տեխնիկայի և մշակույթի ոլորտներում հայտնի են ակնառու հաջողություններով (ինչպես հանրապետությունում, այնպես էլ արտասահմանում):
- բ) գիտական խորհրդատվությամբ, գիտական զեկուցումներով, աշխատանքներով օգնում են համալսարանին՝ առաջարկելով նոր գիտական ուղղություններ, մշակում են գիտական ժամանակակից նախագծեր, ծրագրեր, որոնք կնպաստեն գյուղատնտեսական գիտությունների և արտադրության զարգացմանը.
- գ) միջպետական, միջգերատեսչական և միջբուհական համագործակցության ծրագրերի շրջանակներում աջակցում են ժամանակակից լաբորատորիաների ստեղծմանը և գործող լաբորատորիաների՝ նոր տեխնիկայով և տեխնոլոգիաներով համալրմանը.
- դ) օգնում են ձեռք բերել նոր գիտական գրականություն և ամսագրեր.
- ե) նպաստում են արտասահմանյան գիտաշխատողների հետ համագործակցությանը, աջակցում նոր գիտական կադրերի վերապատրաստմանը:

Համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչում

Պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհվում է այն անձանց, ովքեր չեն աշխատում համալսարանում և՝

- ա) վերջին տարիներին համագործակցում են համալսարանի աշխատանքներին՝ ուսումնամեթոդական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար, օգնում են համալսարանին ներդնել արտասահմանյան բուհերի ուսումնական աշխատանքների առաջավոր փորձը և իրականացնել բարեփոխումներ.
- բ) իրենց հեղինակությամբ, գիտական, ուսումնամեթոդական գրականությամբ, հոդվածներով, զեկուցումներով օգնում են համալսարանին կատարելագործել ուսումնական աշխատանքները.
- գ) օգնում են համալսարանին իրենց խորհրդատվությամբ, առաջարկում նոր մասնագիտություններ, դրանց համար ժամանակակից ծրագրեր, ինչպես նաև հեռանկարային պլաններ՝ նպաստելով թողարկվող մասնագետների որակի բարելավմանը.
- դ) իրենց ակտիվ ակտիվ գործունեությամբ, հրապարակային ելույթներով, հոլվածներով բարձրացնում են համալսարանի միջազգային հեղինակությունը, օգնում համագործակցել արտասահմանյան առաջավոր բուհերի հետ.
- ե) նպաստում են երիտասարդ դասախոսների վերապատրաստմանը այլ երկրներում և ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների բարելավմանը:

Համալսարանի վաստակավոր պրոֆեսորի կոչում

Վաստակավոր պրոֆեսորի կոչում շնորհվում է համալսարանի վաստակաշատ պրոֆեսորներին, ովքեր՝

- ա) 30 տարուց ավելի է, ինչ աշխատում են համալսարանում և ակտիվ մասնակցում են համալսարանի գիտամանկավարժական գործունեությանը.
- բ) ունեն 100-ից ավելի հրատարակված գիտական աշխատանքներ, այդ թվում՝ դասագրքեր, ձեռնարկներ, հոդվածներ և մեթոդական ցուցումներ.
- գ) ղեկավարում են ասպիրանտների և մագիստրանտների ատենախոսությունները, մասնակցել և շարունակում են մասնակցել նոր ուսումնական կամ գիտական ծրագրերի մշակման, ստեղծման և կատարելագործման աշխատանքներին.
- դ) կազմակերպել և ստեղծել են ուսումնական ու գիտական լաբորատորիաներ:

Համալսարանի գիտաշխատողի կոչում

Շնորհվում են համալսարանի այն աշխատողներին, ովքեր՝

- ա) ունեն դոկտորի գիտական աստիճան կամ պրոֆեսորի կոչում.
- բ) մշակել և ստեղծել են գյուղատնտեսական գիտության նոր ուղղություններ, լուծել հիմնարար խնդիրներ, կատարել տեխնիկական, տնտեսական, տեխնոլոգիական այնպիսի մշակումներ, որոնք նպաստել են գյուղատնտեսական գիտության առաջընթացին.
- գ) մշակել և ստեղծել են նոր գյուղատնտեսական սորտեր, ցեղեր, տիպեր, դեղամիջոցներ, մեքենաներ, սարքեր, գործիքներ, որոնց ներդրումը նպաստել է գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը.
- դ) ղեկավարել են գյուղատնտեսական արտադրության համար նախագծեր, ծրագրեր, մասնակցել են դրանց ստեղծման և իրականացման աշխատանքներին.
- ե) մեծ վաստակ ունեն գյուղատնտեսական գիտության զարգացման գործում, հրատարակել են 150-ից ավելի գրքեր, հոդվածներ, արտադրությանն օժանդակող հանձնարարականներ, ձեռնարկներ, մեթոդական ցուցումներ, առաջարկություններ և առնվազն 2 մենագրություն.
- զ) կարդացել են գյուղատնտեսության բնագավառին վերաբերող զեկուցումներ հանրապետությունում և հանրապետությունից դուրս, մասնակցել են միջազգային գիտաժողովների կազմակերպմանը և անցկացմանը, կարդացել են զեկուցումներ, անցկացրել են խորհրդատվություններ գյուղատնտեսության բնագավառի և ֆերմերային տնտեսության աշխատողների համար: